h.1907157
01-04-2026թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ՎԱՀԱՆ ՎԱՆՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2020, ՎԱՆԱՁՈՐ,*
ՏԱՐՈՆ-2 ՔՈԹԵՋԱՅԻՆ ԹՂՄ., ՔՈԹԵՋ 25,
vanyan.63@mail.ru : 37493360068

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Դիմում

1. ՀՀ Վարչական դատարանում է քննվել թիվ ՎԴ6/0024/05/22 վարչական գործն ըստ հայցի Վահան Վոլոդյայի Վանյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի երրորդ անձ՝ Վահրամ Լյովայի Դանիելյան՝ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2022 թվականի փետրվարի 11-ի թիվ 120 հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք հայցվոր Վահան Վանյանին ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում վերականգնելու և Լոռու մարզպետարանից հօգուտ Վահան Վանյանի հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար նրա միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասին։
2. Դատարանը 11.08.2023 թվականին կայացրել է վճիռ, որով վճռել է.
3. Վահան Վոլոդյայի Վանյանի հայցն ընդդեմ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի, երրորդ անձ՝ Վահրամ Լյովայի Դանիելյան, բավարարել՝
   - անվավեր ճանաչել Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2022 թվականի փետրվարի 11-ի թիվ 120 հրամանը,
   - պարտավորեցնել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին Վահան Վոլոդյայի Վանյանին վերականգնել ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 15-րդ մասի ուժով,
   - պարտավորեցնել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին Վահան Վոլոդյայի Վանյանին հատուցել հարկադիր պարապուրդի ամբողջ

ժամանակահատվածի համար՝ միջին աշխատավարձի չափով։

4. ՀՀ Լոռու մարզպետի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք։
5. Վերաքննիչ դատարանը մասնակի բեկանել է վճիռը, որոշելով.
6. ՀՀ Լոռու մարզպետի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 11.08.2023 թվականի վճիռը մասնակիորեն՝ որպես հետևանք՝ Վահան Վանյանին ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում վերականգնելու պահանջի մասով, բեկանել և փոփոխել՝ այդ մասով կայացնելով նոր դատական ակտ.
    - Վահան Վանյանի հայցը՝ որպես հետևանք՝ Վահան Վանյանին ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում վերականգնելու պահանջի մասին, մերժել,
    - պարտավորեցնել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին Վահան Վանյանին ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում չվերականգնելու դիմաց նրան վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով։
    - ՀՀ վարչական դատարանի 11.08.2023 թվականի վճիռը՝ բողոքարկված և չբեկանված մասով, թողնել անփոփոխ։
7. 10.2024 թվականին Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժել է։

Խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

1. ՀՀ Լոռու մարզպետարանը որ թվականին և որ ամսին է ստացել թիվ ՎԴ6/0024/05/22 վարչական գործով 16.10.2024 թվականին Վճռաբեկ դատարանիվճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժելու որոշումը։
2. ՀՀ Լոռու մարզպետարանը որ թվականին և որ ամսին է վճարել թիվ ՎԴ6/0024/05/22 վարչական գործով

- հարկադիր պարապուրդի գումարը և որքան է կազմել

-աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցումը և որքան է կազմել։

Խնդրում եմ առկայության դեպքում միաժամանակ տրամադրել փոխանցման վերաբերյալ վճարային կտրոնները։

Կից ներկայացնում եմ՝

1. Անձնագրիս պատճենը։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության

տրամադրման համար:

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ՎԱՀԱՆ ՎԱՆՅԱՆ